ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ · № 1, 1963 · Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ֆ. Գ. Պողոսյան

ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ

Հայաստանից դարեր շարունակ տեղի ունեցող արտագաղթի շնորհիվ աշխարհի տարբեր մասերում հիմնվել են հայաբնակ գաղութներ։ Դրանցից են՝ Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի, Սոր-Նախիջևանի և Ռուսաստանում հաստատված հայկական մյուս գաղութները, որոնք մեծ դեր են խաղացել հայ-ռուսական տնտեսական, մշակութային և քաղաքական հարաբերությունների ամրապնդում։ Սույն հոդվածի նպատակն է տալ դատարանակազմությունն համաձայն այն դատաստանագրքի, որը գրվել և սկզբում կիրառվել է Աստրախանում, իսկ այնուհետև հարավային Ռուսաստանի հայկական մյուս գաղութներում։ Միաժամանակ համառոտակի խոսելու ենք պատմական այն պայմանների մասին, որոնք հող են հանդիսացել այդ դատաստանագրքի հանդես գալու համար։

Աստրախանում հայերը բնակություն են հաստատել շատ վաղուց՝ մոնղոլական արշավանքների ժամանակ, նախքան Ռուսաստանի կողմից Աստրախանի գրավումը (1556 թ.)։ Աստրախանի միացումը Ռուսաստանին կարևոր նշանակություն ուներ Ռուսաստանի և Արևելյան երկրների միջև կատարվող առևտրի աշխուժացման համար, առևտուր որում պակաս դեր չէին խաղում հայ վաճառականները։ Աստրախանը 15-րդ դ. հանդիսանում էր այն գլխավոր վայրը, որտեղ Անդրկովկասի և Իրանի հայ վաճառականները հանդիպում էին ռուս վաճառականների հետ. աստիճանաբար այդ հանդիպումներն այնքան սիստեմատիկ բնույթ կրեցին, որ արդեն 17-րդ դարում նորմալ առևտուր հաստատվեց Ռուսաստանի և պարսկահայ վաճառականների միջև (1667 թ. պայմանագիրը)։

Ռուսական կառավարության թույլտվությամբ օտարերկրյա վաճառականներ ու արհեստավորներ, այդ թվում նաև բազմաթիվ հայեր, բնակություն են հաստատում Աստրախանում և հիմնում այնտեղ իրենց առանձին թաղն ու քարվանատները։ Գնալով հայերի թիվն Աստրախանում ավելի է աճում, այնտեղ նոր բնակություն հաստատող վաճառականների ու արհեստավորների հաշվին։ 17-րդ դարի 60-ական թվականների վերջերին Աստրախանի հայերը. Մ. Ռիբուշկինի տվյալներով, «իրենց բազմաքանակությամբ գերակշռում էին ռուսներին»[1]։

Հայտնի է, որ Պետրոս 1-ի ժամանակ հայ-ռուսական տնտեսական և քաղաքական հարաբերությունները հասնում են մի նոր, ավելի բարձր աստիճանի։ Պետրոս 1-ի օրոք հայերը ստանում են մի շարք նոր արտոնություններ ու

[1] М. Рыбушкин, Записки об Астрахани, М., 1841, стр. 24.

առանձնաշնորհումներ։ Նա հայերին հրավիրում է (1724՝ թ. նոյեմբերի 10-ի հրամանագրով) բնակություն հաստատել Սուլակ և Թերեք գետերի հովիտներում, խոստանալով հայ գաղթականներին տալ բնակատեղեր, հող, ապրելու հարմարություններ և անհրաժեշտ ապահովություն[2]։

Գաղթելով Ռուսաստան՝ հայերն իրենց անհամեմատ ապահով էին զգում, քան Պարսկաստանում և Թուրքիայում։ Այնտեղ ապահովված էր նրանց կայքի ու կյանքի անձեռնմխելիությունը։

Վաճառականներին առևտրի ասպարեզում տրվող արտոնություններից բացի, ռուսական կառավարությունը նրանց հովանավորում ու խրախուսում էր, որպեսզի նրանք Ռուսաստանում հիմնագրեին ֆաբրիկաներ, մանուֆակտուրաներ ու գործարաններ։ Եվ իրոք, սկսած արդեն 18-րդ դարի սկզբից, հայ վաճառականներն իրենց կապիտալները ներ էին դնում ռուսական արդյունաբերության մեջ, հիմնում մետաքսի և մահուդի ֆաբրիկաներ, գինեգործարաններ և այլ արդյունաբերական ձեռնարկություններ։ 18-րդ դարի առաջին կեսին Աստրախանում, Ղզլարում և նրանց շրջակայքում մետաքսի ֆաբրիկաներ կառուցեցին հայ վաճառականներ՝ Շիրվանովը, Սաֆար Վասիլը, Մակարի որդի Հովհաննեսը և ուրիշներ։

Մատենադարանի արխիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք, որ 1753 թ. ապրիլի 1-ին Թավրիզից մի խումբ հայեր, թվով 14—15 ընտանիք դիմել են Ղզլարում մետաքսի արդյունաբերությամբ զբաղվող ոմն Հովհաննեսի՝ Ղզլար փոխադրվելու առաջարկով։ Փաստաթղթում ասված է, որ «Մենք ներքո ստորագրյալներս (թվարկված են անունները—Ֆ. Պ.)... մեր կամքով խնդրում ենք հանգուցյալ Մակարի որդի Հովհաննեսին, որ նա մեզ ընդունի իր հովանու տակ և ազատի մեզ այս անօրենների երկրից։ Վերոհիշյալ պարոն Հովհաննեսի Ղզլարում ունեցած ընդհանուր մետաքսագործարաններում մենք էլ ապրենք, շերամ պահենք, կորեկ, բամբակ մշակենք և հողագործությամբ ու հացահատիկների մշակությամբ զբաղվենք ըստ մեր հնարավորությունների...»[3]։

Ինչպես տեսնում ենք, ֆաբրիկաների և այլ արդյունաբերական ձեռնարկությունների հիմնումը Աստրախանում ու նրա շրջակայքում է՛լ ավելի արագացրեց հայ բնակչության, առանձնապես արհեստավորների (ջուլհակներ, ներկարարներ, գինեգործներ և այլն) ներհոսքը Ռուսաստան։ Եվ պատահական չէր, որ ըստ սոցիալական կազմի Աստրախանի հայ բնակչության մեջ գերակշռում էին առևտրականներն ու արհեստավորները։ Հայերի գաղթը դեպի Ռուսաստան մեծ չափերի է հասնում առանձնապես 18-րդ դարի երկրորդ քառորդում, հայ ժողովրդի 20-ական թվականների ազատագրական շարժման ճնշումից հետո։ Ապստամբ հայերի մի մասը, թուրքական և պարսկական զավթիչների դաժանություններից փրկվելու համար, Ղաբաբաղից և Զանգեզուրից գաղթում են Ռուսաստան, համալրելով Ռուսաստանում եղած հայաբնակ գաղութները և հիմնադրելով նորերը։ Այդ ժամանակ (1735 թ.) հայերի կողմից հիմնադրվեց Ղզլարը, քիչ ուշ՝ Մոզդոկը։

Այսպիսով, առաջին գաղթականներն իրենց հետևից ձգեցին նորանոր ընտանիքների։ Գնալով, շարունակ աճող գաղթի և բնական աճի շնորհիվ, Աստ

---

[2] «Собрание Актов относящихся к обозрению истории армянского народа». М., 1833 г., ч. I, стр. 165—168.

[3] Մատենադարանի արխիվ, կաթ. դիվան, թղթ. № 1, վավ. № 26 (բնագիրը ռուսերեն է)։

ռախանի հայկական գաղութի հայ բնակչության թիվը 18-րդ դարի կեսերին, դարասկզբի համեմատությամբ, ավելացավ շուրջ 10 անգամ։ Այսպես, եթե 18-րդ դարի սկզբներին Աստրախանում հաշվվում էր 40 հայ ընտանիք, այսինքն՝ մոտ 200 մարդ, ապա նույն դարի կեսերին՝ հայերի թիվը հասավ մոտ 2000-ի։

Բնակչության քանակական աճի հետ միասին, աճում ու մեծանում էր նաև քաղաքի տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքում հայկական գաղութի դերն ու նշանակությունը։ Ուստի և ռուսական կառավարությունը, հաշվի առնելով Աստրախանի և նրա շրջակայքի հայկական գաղութների բնակչության դերն ու նշանակությունը կայսրության արևելյան առևտրում, ընդառաջեց նրանց և բավարարեց նրանց խնդրանքները ոչ միայն տնտեսական, այլև իրավական ու կրոնական առանձնաշնորհումների մասին։

Աստրախանի հայերը շարունակ դիմումներ էին ներկայացնում նահանգային կառավարչությանը և խնդրում միջնորդել կառավարության առջև, որպեսզի իրենց տրվի իրավական և կրոնական արտոնություններ, թույլատրվի դատը վարել իրենց հինավուրց սովորությունների ու օրենքների համաձայն, ունենալ սեփական եկեղեցիներ, իրենց չգրանցել պոսադում, որով հայերը զրկվելու էին օտարերկրյա վաճառականներին տրվող արտոնություններից և վճարելու էին շնչահարկ։ Ընդառաջելով հայ համայնքի և Աստրախանում ապրող մյուս օտարերկրացիների խնդրանքին, Աստրախանի նահանգային դրասենյակը 1743 թ. նոյեմբերի 13-ին Սենատին է ներկայացնում նրանց պահանջները։ Քննելով այդ հարցը, Սենատը 1744 թ. փետրվարի 29-ին ընդունում է հայերի և մյուս օտարերկրացիների համար խիստ նպաստավոր որոշում։ Համաձայն այդ որոշման 4-րդ կետի, Աստրախանում ապրող հայերը և մյուս օտարերկրացիները պետք է դատվեին ըստ իրենց օրենքների ու հին սովորությունների, իսկ նույն որոշման 5-րդ կետով թույլատրվում էր նրանց կրոնական հարցում ղեկավարվել իրենց տրադիցիաներով, խստիվ արգելվում էր այդ հարցում բռնություն գործադրելը։

Սենատի 1744 թ. փետրարի 29-ի հրամանագրում, փաստորեն առաջին անգամ, սահմանված էին հայերին և մյուս օտարերկրացիներին տրվող իրավական նորմաները։ Սակայն Սենատի այդ որոշումը չիրագործվեց, որովհետև նրա իրականացմանը ամեն կերպ խոչընդոտում էին Աստրախանի Մագիստրատը և մի խումբ ռուս վաճառականներ, որոնք դեմ էին օտարերկրացիներին տրված և տրվելիք արտոնություններին։ Հակառակ Մագիստրատի, հաշվի առնելով օտարերկրացիների և, առանձնապես հայ բնակչության արագ աճը, նրանց դերը քաղաքի տնտեսական կյանքում ու ռուսարևելյան առևտրում, նահանգային դրասենյակն ու նահանգապետ Վ. Ն. Տատիշչևը պաշտպանում էին հայերի և մյուս օտարերկրացիների պահանջները և, իրենց առաջարկություններով հանդերձ, նրանց խնդրագրերը նորից ներկայացնում Սենատին։ Սենատը կրկին անդրադառնալով հայերին և մյուս օտարերկրացիներին տրվելիք իրավական ու կրոնական արտոնությունների հարցին՝ 1746 թ. սեպտեմբերի 17-ին տալիս է մի նոր հրամանագիր, որով որոշակիորեն սահմանվում է հայերի և մյուս օտարերկրացիների իրավական դրությունը։ Այդ հրամանագրի հիմքում ընկած էր Սենատի 1744 թ. փետրվարի 29-ի որոշումը և Աստրախանի նահանգային դրասենյակի 1744 թ. օգոստոսի 14-ի առաջարկությունները։ Այդպիսով, Կառավարող Սենատը, ելնելով առաջին հերթին պետության շա-

հերից և, մանավանդ, երկյուղ կրելով արևելքի հետ կատարվող առևտրի անկումից՝ բավարարում է հայերի և մյուս օտարերկրացիների պահանջները։

Սենատի 1746 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագիրը ամբողջովին վերաբերում է օտարերկրացիների, այդ թվում նաև հայերի կայսրության մեջ ունենալիք տնտեսական, իրավական ու կրոնական դրությանը։ Հրամանագիրը բաղկացած է 8 կետից։ Երկրորդ կետում շարադրված են օտարերկրացիների համար սահմանված իրավական նորմերը։ Այնտեղ ասված է. «Նրանց՝ հայերի, կաթոլիկների, հնդիկների, բուխարացիների, գիլանցիների, ագրիժանցիների և մյուս օտարերկրացիների համար, որոնք մշտապես և ժամանակավոր բնակվում են Աստրախանում, ըստ Աստրախանի նահանգային գրասենյակի առաջադրության բոլորի դատն ու դատաստանը միմյանց հետ վարել նախկին ձևով, ինչպես մինչև այժմ նրանց մեջ տեղի է ունեցել և այդ նպատակով նրանց բոլորի համար հիմնել մեկ ռատհաուզ և նրանում դատավոր ընտրել ամենից հարգարժան մարդկանց, իրենց հայեցողությամբ»[4]։

Սա փաստորեն հայերի և մյուս օտարերկրացիների հաղթանակն էր Աստրախանի Մագիստրատի և ռուս վաճառականների մի խմբի դեմ, որոնք դեմ էին օտարերկրացիներին տրված և տրվելիք արտոնություններին։

Սենատի հրամանագրի վերոհիշյալ հոդվածում, ինչպես տեսանք, որոշակի ասված է, որ բոլոր օտարերկրացիների համար պետք է հիմնել մեկ ռատհաուզ, որի դատավորների ընտրությանը պետք է մասնակցեն բոլոր օտարերկրացիները։ Հայերը, սակայն, շրջանցում են այդ որոշումը և, 1746 թ. վերջին, ընտրում իրենց համար առանձին դատավորներ և հիմնում սեփական դատարան։

Հայկական դատարան ստեղծելուց հետո բնականաբար առաջ է եկել նաև հայկական դատաստանագիրք ունենալու պահանջը, որովհետև, ինչպես ասացինք, կառավարող Սենատի հրամանագրով հայերը և մյուս օտարերկրացիները իրավունք էին ստացել դատը վարել համաձայն իրենց օրենքների ու հին սովորությունների։ Հայկական դատարանին անհրաժեշտ էր ունենալ օրենքների մի ընդհանուր ժողովածու, որպեսզի նրանով առաջնորդվեին դատ վարողները։ Եվ որովհետև այդպիսի օրենքների ժողովածու գոյություն չուներ, աստրախանցիների առաջ ծառանում է նոր դատաստանագիրք ստեղծելու անհրաժեշտությունը։ Այդ մասին խոսում են իրենք՝ «Դատաստանագրքի» հեղինակները, տալով հետևյալ հիմնավոր պատճառաբանությունը. «Եւ որպեսզի լինիցի ուղիղ վերահասութիւն իրաւանց և դատաստանական գործոց հարկ էր լինիլ ի իրաւարանին հայոց դատաստանագիրք, որպէսզի նովաւ վարիցին ամենեքեան դատաւորք... քանզի դատաւորն, թէպէտ և կատարեալ տեղեակ իցէ օրինաց և իրաւանց, սակայն առանց դատաստանական մատենի, ի բազումս կարէ վրիպիլ, վասնզի դատաստանագիրքն է ճանապարհ արքունական, որով ընթացողն ոչ խոտորին և յաջ և ի ահեակ, և է զամբար լուսոյ, որ առաջնորդէ առ վարումն ուղղութեան, ուստի եթէ ոք արասցէ զիրաւունս առանց դատաստանական մատենից, նման լինի առն յիմարի, որ ի մթին գիշերի շրջի առանց լուսոյ ճրագի»[5]։

---

[4] Государственный архив Астраханской области, ф. 394, опись I, дело 1182, лл. 249—252: (կրճատ ГААО): ПС 3, т. XII, № 9311.

[5] Մատենադարան, ձեռ. № 7383։ «Առաջարան», թուղթ Դ։

Նոր «Դատաստանագիրք» կազմելու գործը իրենց վրա են վերցնում Աստրախանի բնակիչներ՝ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր գի Սաֆար Կամպանյանը և Օհանի որդի Սարգիսը։ «Դատաստանագիրք» կազմելու աշխատանքը տևել է բավական երկար ժամանակ և իր ավարտին է հասել 1765 թ.։ Իրենք՝ հեղինակները առաջաբանում դրել են, որ «Դատաստանագիրքը» կազմեցին «Երկար ժամանակ աշխատութիւն կրելով...» և մեծ ջանք թափելով, որպեսզի «իւրաքանչիւր բանք և կանոնք իրաց ուրոյն և ըստ պատշաճին լիցի գրեցեալ» և «ընթերցողքն առանց տառապանաց գտանիցեն զխնդիր իւրեանց»։

Ամբողջ դատաստանագիրքը բաղկացած է երեք մասից և մի ընդարձակ առաջաբանից։ Դատարանակազմությանն վերաբերող հոդվածները, հիմնականում, զետեղված են դատաստանագրքի երկրորդ մասում, որը կրում է «Յաղագս պարտաւորութեան դատաւորաց, դատաստանական պաշտօնէից և այլ դատաստանական կարգաց» վերնագիրը և ընդգրկում է 107 հոդված։ Սակայն դատարանի և, առանձնապես, դատավորների իրավունքների ու պարտականությունների մասին զանազան առիթներով ուղղակի և անուղղակի ձևով խոսվում է նաև դատաստանագրքի մյուս մասերի առանձին գլուխներում, մանավանդ առաջին մասի 16 և 23-րդ գլուխներում։

Ըստ դատաստանագրքի և Աստրախանի Հայկական իրավարանի փաստաթղթերի՝ Հայկական դատարանը իրավասու էր քննելու քրեական և քաղաքացիական բոլոր գործերը, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ կողմերից մեկը հոգևոր պաշտոնյա էր, կամ ազգությամբ ռուս։ Առաջին դեպքում գործը քննում էր տեղի հայոց հոգևոր առաջնորդը, իսկ երկրորդ դեպքում՝ Աստրախանի Մագիստրատը՝ Հայկական Ռատհաուզի ներկայացուցչի մասնակցությամբ։ Դատաստանագրքում թվարկված են ոչ միայն քրեական բոլոր այն հանցագործությունները՝ աստծո, թագավորի, մասնավոր սեփականության, անձի, կյանքի, առողջության, արժանապատվության և այլնի դեմ ուղղված, որոնց վերաբերող գործերը ընդդատյա էին Հայկական դատարանին, այլև տրված են նրանց համապատասխան պատիժները սկսած տուգանքից ու ծեծից, վերջացրած անդամահատությամբ ու մահապատժով։ Համաձայն դատաստանագրքի Հայկական իրավարանը վարելու էր ոչ միայն քաղաքի և նրա շրջակա հայաբնակ գյուղերի քրեական ու քաղաքացիական դատական գործերը, այլև հսկելու էր հարկերի բաշխմանն ու հավաքմանը, միաժամանակ հանդիսանալով նրանց ոստիկանատունը։ Հայկական դատարանը, հանդիսանալով գաղութահայերի դատական և ֆինանսական օրգանն ու ոստիկանատունը նահանգային և կենտրոնական մարմինների առաջ, պատասխանատու էր պետու-

* Դատաստանագիրքը պահվում է Մատենադարանում 7383 համարի տակ։ Մատենադարանում Աստրախանի Դատաստանագրքի երկու այլ ընդօրինակություններ պահվում են ևս։ Դրանցից մեկը (ձեռ. № 3147) կատարել է Նոր-Նախիջևանի Հայկական Մագիստրատի ատենադպիր Մկրտիչ Մոսոզյանը 1863 թվին։ Այդ օրինակը ոչնչով չի տարբերվում վերոհիշյալ ձեռագրից։ Մյուս ընդօրինակությունը (ձեռ. № 448) կատարված է 1802 թ., որոշ փոփոխություններով ու կրճատումներով։ Այս ընդօրինակության վրա ռուսական օրենքների և միջավայրի ազդեցությունն ավելի ակնհայտ է։ Բացի դրանից, այստեղ Աստրախանի Դատաստանագրքի համեմատությամբ պատիժները մեղմացված են։ Մի շարք դեպքերի համար Աստրախանի Դատաստանագրքով նախատեսված մահապատիժները փոխարինված են հրապարակային ծեծով ու աքսորով։ Այս ընդօրինակությունը պարունակում է ընդամենը 870 հոդված, այսինքն 265 հոդվածով պակաս է Աստրախանի Դատաստանագրքից։

թյան հանդեպ նրանց ունեցած ամեն տեսակ պարտավորությունների համար, ներկայացնելով նաև հայերի պահանջները։

Ըստ դատաստանագրքի Հայկական դատարանը բաղկացած է եղել երկու ատյանից՝ ստորին մշտական գործող դատարանից և վերին՝ 9 հոգուց բաղկացած մի խորհրդից, որը կատարում էր որոշ առումով երկրորդ ատյանի ֆունկցիա։ Ստորին կամ մշտական գործող դատարանը բաղկացած է եղել հետևյալ պաշտոնյաներից՝ դատավորներ հոգի, ատենադպիր, օրինակող, թարգմանիչ, ստարոստա, ատենապահ և բանտապետ («Դատաստանագիրք», մասն 2, գլ. 1, հոդ. 1)։ Դատարանի կառավարիչներին և սպասավորներին թվարկելուց հետո դատաստանագրքում նշվում է, որ այդ պաշտոնները չեն կարող գրավել հրապարակով պատժվածները, խելագարները, հանցանքի համար դատական պաշտոնից հեռացվածները, եկեղեցու կողմից նզովածներն ու բանադրվածները։ Այնուհետև ասված է, որ վերոհիշյալ հատկանիշների բացակայությունից բացի դատավորներ, ատենադպիր, ստարոստա և բանտապետ չեն կարող լինել այն քաղաքացիները, որոնց 25 տարին չի լրացել։ Համաձայն դատաստանագրքի՝ դատավորներ, ատենադպիր, օրինակող, թարգմանիչ և ստարոստա չէին կարող լինել նաև անգրագետները (մասն 2, գլ. 1, հոդ. 1)։ Ըստ դատաստանագրքի Հայկական դատարանը իրավասու էր քննելու և դատելու միայն հայ համայնքի անդամներին, այսինքն նրանց, ովքեր գտնվում են իր իշխանության ներքո, ինչպես նաև նրանց, ովքեր իրենց հոժար կամքով ցանկանում էին դատվել Հայկական դատարանում, ունենալով այդ մասին իրենց դատավորի թույլտրվությունը (մասն 2, գլ. 2, հոդ. 8—9)։ Աստրախանի Հայկական իրավարանը, որպես աշխարհիկ դատարան կամ ինչպես դատաստանագրքում է ասված «քաղաքական դատաստանարան», իրավունք չուներ քննելու նաև հոգևոր պաշտոնյաների գործը։ Այդպիսիք ուղարկվում էին տեղի հայոց հոգևոր առաջնորդին, եպիսկոպոսին կամ եկեղեցու մեծավորին (մասն 1, գլ. 3, հ. 32)։ Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Աստրախանի Հայկական իրավարանը, ինչպես մյուս, այնպես էլ այս հարցերում ղեկավարվել ու առաջնորդվել է դատաստանագրքով։ Այսպես, երբ 1765 թ. աշխարհիկ Խոջամալը դիմում է Հայկական իրավարանին ցանկանալով դատարանի միջոցով ջուղայեցի Ասծատուրից ստանալ իր ժամկետանց պարտքը, իրավարանը հաշվի առնելով, որ Ասծատուրը հոգևորական է, գործը ուղարկում է Ռուսահայոց հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Ստեփանոսին գրելով. «...Ըստ քննությանն հայոց իրավարանին հայոց դատաստանայգրքոջ մասն՝ առաջին երրորդ գլուխ գրեցեալ է. եթէ քահանայ, նախասարկավաք, կղերիկոս և այլ եկեղեցական անձինք պարտական իցեն ումեք ոչ է պարտ դատել զնոսայ ի քաղաքական ատենի, այլ առաքելի է առաջնորդ տեղոյն, վասն այսորիկ հայոց դատաստանագրքի զօրութեամբն... իրավարանն կարգավորեաց առաքել առ քեզ պրոմէմօրիայ և խընդրել, որ յիշեալ դի Խոջամալին սանատով պահանջողութեանն ի տէր Ասծատուր դի Մանուկէն արասցես իրավունս և բավականացումն դի Խոջամալին ըստ օրինաց... և որպեսութիւն եզրակացութեանն հայոց իրավարանին իմացումն տարցես գրով»[6]։

---

[6] ГААО, фонд Астраханский армянский суд, № 810, опись 3, д. 2, л. 16. (կրճատ ГААО, ф. ААС).

Ինչպես նշեցինք վերևում, Աստրախանի հայկական գաղութում բացի մշտական գործող դատարանից կար նաև 9 հոգուց բաղկացած մի խորհուրդ, որը փաստորեն կատարում էր բարձրագույն ատյանի ֆունկցիա։ 9 հոգուց կազմված այդ հանձնաժողովի անդամները ընտրվում էին բնակչության կողմից, որոնք տեղյակ պետք է լինեին օրենքներին և դատավորության կարգ ու կանոնին։ Աստրախանի Հայկական իրավարանի փաստաթղթերում նույնպես խոսվում է 9 հոգուց բաղկացած հանձնաժողովի անդամների ընտրության ու նրանց անելիքների մասին։ Աստրախանի հայոց հոգևոր առաջնորդ Ստեփանոսին և հունադավան հայերի գլխավոր Ռոմովալդուսին ուղղված իրավարանի 1765 թ. հուլիսի 22-ի գրության մեջ ասված է. «...Յայտ լիցի սրբազանիցդ, որ մահլի հարկավորութեան աղագավ ի հասարակութենէ ընտրեալ 9 անձինքն այս յուլիսի 22էն գրով խնդրեալ ան իրավարանէս այսպէս որ մերազնեայքն բոլորովին, մեծք և փոքունք առհասարակ, խնդրում են, որ ուքազ հանելոյ աղագավ քանի գլխավոր մարդիք վերեվ առաքել առանց երկարելոյ, որ ըստ ժամանակին տեղ հասանելով՝ բանի կատարումն տարցեն։ Վասնորոյ իրավարանն ի բազում ըստիպմանէ և խնդրոյ յիշեալ 9 անձանց հարկավորեցավ նոցայ գիրն գրովս յղիլ և խնդրել սրբազանիցդ, որ յայսմ աւուր կոչել տարցէք աստրախանայ մեշչանիք Ղեյվոզ դի Բունիաթին, Սարդիս դի Յոհանին և Պետրոս դի Վարդանին և... յանձն առնել տարցէք, որ նոքայ... մոտ ժամանակիս երթալոյ պատրաստութիւն տեսցեն...»[7]։

Այստեղից պարզ երևում է, որ իրոք, 9 հոգուց բաղկացած խորհրդի անդամները ընտրվում էին հասարակության կողմից, պարտավոր էին ունկնդրելու նրանց ձայնին, հաշվի առնելու բնակչության ընդհանուր պահանջները և. որ կարևորն է, ստիպելու ամենօրյա գործող դատարանին կատարելու այդ պահանջները։ Սակայն նրանց հիմնական պարտականությունն էր քննել դատավորների վճռից դժգոհների դիմումները, հաստատել կամ բեկանել նրանց կայացրած դատավճիռը։ Ըստ դատաստանագրքի եթե մեկն ու մեկը դժգոհ էր մնում Հայկական իրավարանի վճռից, ապա նա կարող էր դիմել 9-ի խորհրդին։ Եթե վերջինս դատավճիռը համարում էր սխալ, բեկանում էր այն և դատավորներին տուգանում հօգուտ արքայական գանձարանի, իսկ հաստատելու դեպքում բողոքողը պարտավոր էր դատավորներից յուրաքանչյուրին տալ 100 ռուբլի և տուգանք արքայական գանձարանին. «...ըստ չափու թիւր բողոքմանն տասներորդ մասն» (մասն 2, գլ. 3, հոդ. 465)։ Դատաստանագիրքը պահանջում է, որպեսզի 9-ի խորհրդի անդամները «Մեծաւ զգուշութեամբ և մանրամասնաբար... վերահասու «լինեն» ի վերա գործոց դատաւորաց, զի ըստ օրինաց արասցեն զլուծումն խնդրոյ բողոքողացն», հակառակ, այսինքն սխալ վճիռ կայացնելու դեպքում նրանք պարտավոր էին «վասն թիւր վերահասութեան իւրեանց» վճարել բողոքողին կրած ամբողջ վնասով հանդերձ (մասն 2, գլ. 3, հ. 10)։ Ըստ դատաստանագրքի իրավարանի վճռից դժգոհ և նրա դեմ բողոքել ցանկացողները պետք է գրավոր խնդրագիր (բողոքական արզա) ներկայացնեին թե՛ դատավորներին և թե 9-ի խորհրդի անդամներին (մասն 2, գլ. 3, հ. 3), որից հետո դատավորները դատարան էին հրավիրում խորհրդի անդամներին և նրանց հանձնում գործի քննությունը։ Դատավորների հրավերն ու բողոքական արզան ստանալուց հետո խորհրդի անդամները պարտավոր էին

---

7 ГААО, ф. ААС, № 810, оп. 3, д. 2, л. 7.

ներկայանալ դատարան և քննել գործը։ Առանց օրինավոր պատճառի չներկայացողը հօգուտ արքայական գանձարանի տուգանվում էր առաջին անգամ 10, երկրորդ անգամ 20, երրորդ անգամ 30 ռուբլի և հեռացվում պաշտոնից (նույն տեղում)։ 9-ի խորհրդի որոշումը պետք է լիներ անպայման գրավոր և ստորագրված բոլորի կողմից (նույն տեղում, հ. 6)։ Տարաձայնություն լինելու դեպքում նրանցից յուրաքանչյուրը առանձին թղթի վրա գրում էր իր կարծիքը («մնենիե»), կարծիքներից անցնում էր այն, որի կողմնակիցները թվով շատ էին լինում (նույն տեղում, հ. 7)։ Եթե դատավճռի շուրջը տարաձայնություն էր առաջ գալիս դատավորների մեջ, ապա նման դեպքում նույնպես գործը հանձնվում էր 9-ի խորհրդի անդամների քննությանը (նույն տեղում, հ. 8)։ Այստեղից երևում է, որ ըստ դատաստանագրքի իրավարանի վճիռը պետք է լիներ միասնական, որի համար էլ նույն գլխի 13-րդ հոդվածում ասված է, որ եթե դատավորներից մեկը հարգելի պատճառով բացակայում է, պետք է հրավիրել 9-ի խորհրդի անդամներից մեկն ու մեկին, բայց ոչ միշտ նույն անդամին։ Եթե բողոքարկող կողմը դժգոհ էր մնում նաև 9-ի խորհրդի վճռից, մի բան, որը շատ հազվագյուտ կարող էր պատահել, ապա իրավունք ուներ դիմելու «վեհագոյն դատաստանարան», որն արդեն Հայկական իրավարանի սահմաններից դուրս էր գտնվում։ Սակայն Հայկական դատարանի դերն ու նշանակությունը բարձր պահելու մտահոգությամբ դատաստանագրքում ասված է, որ եթե «վեհագոյն դատարան»-ը ուժի մեջ թողներ 9-ի խորհրդի որոշումը, ապա հայցվորը խորհրդի անդամներին վիրավորելու, նրանց վճիռը սխալ համարելու համար պարտավոր էր նրանցից յուրաքանչյուրին վճարել 100 ռուբլի (այսինքն՝ 900 ռուբլի), մի ահռելի գումար. «և տասներորդ մասն զուր բողոքման տուգանս ի գանձարանս արքունի» (մասն 2, գլ. 3, հ. 14)։ Պարզ է, որ նման պայմաններում, մանավանդ բնակչության ստորին խավերից, հազիվ թե որևէ մեկը համարձակվեր դիմել «վեհագոյն դատարան»-ին։ Իսկ դիմելու դեպքում, եթե վերջինս բեկանում էր 9-ի խորհրդի վճիռը, ապա խորհրդի դատավճիռը ստորագրած անդամները պարտավոր էին «վճարել զխնդիր դատախազին՝ վնասիւքն ամբողջ» (նույն տեղում, հ. 11)։ Դատաստանագրքում, ամենայն մանրամասնությամբ, տրված է վերոհիշյալ հարցում բոլոր հնարավոր դեպքերի պատասխանը։ Ասված է, որ եթե 9-ի խորհուրդը կայացնում է նույն դատավճիռը ինչ կայացրել էին դատավորները և «վեհագոյն դատաստանարանը» բեկանում է, ապա «զխնդիր բողոքողին վճարեսցեն վնասիւքն հանդերձ վերահաս լինող անձինքն, որքան և իցեն, հաւասար մասամբ և դատաւորքն տացեն տուգանս արքայական գանձարանին ըստ կարգաւորութեան և վերահասութեան վեհագոյն դատաստանին որքան արժան իցէ» (մասն 2, գլ. 3, հ. 12)։ Իսկ եթե 9-ի խորհուրդը բեկանում է դատարանի վճիռը և կայացնում նորը, որը և մերժվում է «վեհագոյն դատաստանարան»-ի կողմից, այդ դեպքում դատավորները ազատվում էին տուգանքից, որովհետև սխալ վճիռ կայացնելու համար նրանք արդեն տուգանվել էին (տե՛ս նույն գլխի հ. 4) և միայն «վերահասու լինող անձինքն վճարեսցեն զխնդիր բողոքողին վնասիւքն հանդերձ առանց թերութեան» (մասն 2, գլ. 3, հ. 12)։ 9-ի խորհրդի անդամներից մեկն ու մեկի զանազան պատճառներով երկար ժամանակ, կամ իսպառ բացակայելու դեպքում նրա փոխարեն ընտրում էին մեկ ուրիշի (մասն 2, գլ. 3, հ. 15)։

Բացի վերոհիշյալներից 9-ի խորհրդի անդամները պարտավոր էին դատավորների հետ միասին թագավորական և այլ ծախսերի համար ժողովրդից հավաքվող հարկերը ճշտորեն և անաչառ կերպով բաշխել ժողովրդի վրա։ Դատավորների հետ միասին յուրաքանչյուր տարի վերահասու լինել, ստուգել ստարոստայի հաշիվները, որը հարկ էր հավաքում ժողովրդից (մասն 2, գլ. 2, հ. 34)։

* * *

Համաձայն դատաստանագրքի Հայկական դատարանի դատավորներին ընտրում էին իրենք՝ հայերը, իրենց հայեցողությամբ, առավել աչքի ընկնող, բանիմաց և օրենսգետ քաղաքացիներից, կամ նշանակվում էին թագավորական հրովարտակով (մասն 2, գլ. 2, հ. 1, 7)։ Դատավորների ընտրության կարգի մասին բազմաթիվ փաստաթղթեր կան Աստրախանի Մարզային արխիվի Հայկական դատարանի ֆոնդում[8]։

Ընտրությունից հետո դատավորները պարտավոր էին երդվելու, որ դատը վարելու են արդար ու անաչառ։ Ըստ որում երդմանը ներկա էր լինում նաև նահանգային գրասենյակի ներկայացուցիչը։ 1747 թ. համար ընտրված դատավորների երդմնագիրը վերջանում է հետևյալ ձևով «...Այս պրիսակիս ջոկած բռադգայուզի սուդիայ խայի դավանութեամբ Յուսեփ դի Յակոբ պրիսակալ ի պոտպիսալ ապրելի 11 թիվն 1747-ումն։

Այս փրրիսակիս ջոկած բռատգավուզուն սուտեայ հայի դավանութեամբ Եղիազար Գրիգորով փրրիսակալ պրտփիսալո ապրիլի ԺԱ, թվն 1747։

Վերոյ ջոկած սուտեքոնց վրատկաուզուն Օսեփ Եակբլով, Եղայզար Գրիգորովէս երթումն երդմնացուցի մեր հաւատով հայոց սուրբ Աստվածածնայ եկեղեցում, էն եկեղեցոյ քահանայ Բաղդասար Ղազարով ձեռք դրի ապրելի ԺԱ ՌէձԽէումն։

Այս պրիսակիս ջոկաց արաթկավուզի սութիեայ կաթոլիկի դավանութեան էվաղ Մխիթարով պրիսակալ ի պիթպսալ ապրելի ԺԱ, ՌէձԽէում»[9]։ Նույն գործում կա նաև կապիտան Գավրիլի գրությունը ուղղված նահանգապետ Ա. Ա. Երլկինին այն մասին, որ ինքը անձամբ ներկա է եղել ռատհաուզի դատավորներ՝ Օսիպ Յակովլևի, Ելիզա Գրիգորևի և Այվազ Մխիթարևի երդմանը, որը տեղի է ունեցել ապրիլի 11-ին իրենց հավատով[10]։

Դատաստանագրքի հեղինակները դատավորների թիվը սահմանել են 3 հոգի։ Երեք դատավորներից մեկը կոչվում էր գլխավոր և առաջին դատավոր, մյուսը՝ երկրորդ, վերջինը՝ երրորդ (մասն 2, գլ. 21, հ. 3)։ Դատավարության ընթացքում առաջին կամ գլխավոր դատավորը նստում էր կենտրոնում, նրա աջ կողմում երկրորդ և ձախ կողմում երրորդ դատավորները (մասն 2, գլ. 4, հ. 1)։ Սակայն դատավորների այսօրինակ բաժանումը սոսկ անվանակոչության համար էր, իրավական տեսակետից նրանք բոլորն էլ հավասար էին, ունեին հավասար իրավունքներ և պարտականություններ (մասն 2, գլ. 2, հ. 3)։

---

[8] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 230—231; л. 491; д. 1638, л. 154; доп. д. 111, л. 3—4; фонд АСС, № 415, оп. 2; д. 7, л. 1; д. 9, л. 17; д. 16, л. 2 и т. д.

[9] ГААО, ф. 394, оп. 1, доп. д. 76, лл. 230—231.

[10] Նույն տեղում, թուղթ 234։ 1765 թվականից սկսած Հայկական Ռատհաուզը կոչվում է Հայկական իրավարան, որոնց միջև էական տարբերություն չկա։

Այդ մասին որոշակի տեղեկություններ կան նաև արխիվային փաստաթղթերում։ Այսպես, օրինակ, Աստրախանի բնակիչ Դավիթ Գրիգորևի 1750 թ. սեպտեմբերի 28-ի խնդրագիրը ուղղված է ոատհաուզի 2-րդ և 3-րդ դատավորներին՝ Մկրտիչ Պետրովիչին և Մելքիսեթեկ Բաղդասարովին, որում բողոքում է առաջին դատավոր Խաչատուր Մելքումովից։ Խնդրագրում ասված է. «Թագավորական հրամանին հաստատեալ բռատկավուզ և մեր հայոց հավանութեամբն տարումս կարգեալ բֆտարոյ սուդիեայ Մկրտիչ Պետրովիչին, Մելքիսեթեկ Բաղդասարովին»։ Հայտնում է, որ «պերվոյ սուտիեայ Խեչատուր Մելքումովի»-ը պաշտպանում է իր պարտական Անաստաս Միկիտովին։ Խնդրում է գործը չձգձգել և օրինավոր կերպով լուծել[1]։

Դատաստանագիրքը դատավորներից պահանջում է վսեմ հատկություններ՝ նրանք պետք է լինեին արդարադատ, ճշմարտասեր, անաչառ, ու անկաշառ, օրենսգետ, համբերող ու ունկնդրող (մասն 2, գլ. 2, հ. 4, 6)։ Դատավորները պարտավոր էին ամենայն համբերությամբ լսել «դատախազին» (հայցվորին, ամբաստանողին, բողոքողին) ու «պատասխանողին» (ամբաստանյալին) (մասն 2, գլ. 2, հ. 5), քննել և գտնել ճշմարտությունը։ Դատաստանագիրքը դատավորներին պարտավորեցնում է, որպեսզի հնարավորության չափ գործի քննությունն ու դատը կատարեին արագ։ Ասված է, որ ձգձգումը կարող է մեծ վնաս հասցնել գործին։ Սահմանված է որոշակի ժամկետ՝ 3 ամիս, որի ընթացքում նրանք պարտավոր էին գործին լուծում տալ։ Եթե այդ ժամկետում, առանց օրինավոր պատճառի, նրանք չկատարեին իրենց պարտականությունը և լուծում չտային գործին՝ նրանցից յուրաքանչյուրը, որպես տուգանք, պետք է արքունի գանձարանը մուծեր 50 ռուբլի (մասն 2, գլ. 2, հ. 19)։ Իսկ որպեսզի հայտնի լիներ գործը դատարան հանձնելու ժամանակը, դատավորները պարտավոր էին արգա (խնդրագիր, բողոքագիր), ինչպես նաև հուշագիր ու հրովարտակ ստանալու դեպքում անձամբ մակագրել, նշել ստանալու ամսաթիվը և հանձնել ատենադպրին մուտքի մատյանում գրանցելու համար (մասն 2, գլ. 2, հոդ. 30)։

Դատավորները չէին կարող դատավճիռը ստորագրելու համար տանել տուն (մասն 2, գլ. 2, հ. 13), նրանք պարտավոր էին առանց քաշվելու. համարձակորեն միմյանց հայտնել իրենց կարծիքը և եթե այն համընկնում է իրար ու համեմատ է օրենքներին (հնարավոր է, որ իրար համընկնի, բայց անօրինական լինի) հաստատել, իսկ եթե չի համընկնում՝ բացատրել հանգամանորեն և վեր հանել ճշմարտությունը (նույն տեղում, հոդ. 18)։ Իրենց կողմից քննվող գործի առնչությամբ դատավորներից ոչ մեկը իրավունք չուներ հանդես գալու որպես վկա, ինչպես հայցվորի, այնպես էլ պատասխանողի կողմում, որովհետև ըստ դատաստանագրքի հնարավոր բան չէ, որ նույն անձնավորությունը հանդես գա և դատավոր և վկա։ Նրանք պարտավոր էին լսել ամբաստանողին, պատասխանողին, քննել վկաներին և դրանց հիման վրա վճիռ կայացնել (մասն 2, գլ. 2, հոդ. 10)։ Դատավորները դատարանից դուրս իրավունք չունեին «դատ կտրելու» և նույնիսկ հայցվորից կամ պատասխանողից արգա ընդունելու (նույն տեղում, հոդ. 11, 12)։ Եթե դատավորներից մեկն ու մեկը, հիվանդության կամ այլ հարգելի պատճառով, չի կարողանում ներկայանալ դատարան, մյուս երկուսը իրավունք չունեին գործը հետաձգելու, այլ պարտավոր էին քննել, կայացնել իրենց վճիռը և ատենադպրի միջոցով ուղար-

[1] ГААО, ф. ААС, № 415, оп. 1, д. 2, л. 35.

կել բացակա դատավորին, նրա հավանությունն ու ստորագրությունը ստանալու համար (նույն տեղում, հ. 16)։ Իսկ գործի քննությունից օրինական պատճառով հրաժարված դատավորի փոխարեն, որպեսզի դատավորների քանակը ապահովված լիներ, դատաստանագիրքը առաջարկում է կանչել ինը հոգուց բաղկացած խորհրդի անդամներից մեկն ու մեկին ե գործին լուծում տալ (նույն տեղում, հոդ. 25)։ Անհարգելի պատճառով երկար ժամանակ բացակայելու և իր դատավորական պարտականությունները չկատարելու դեպքում, հայցվորներին տառապանք պատճառելու համար, դատավորը ենթարկվում էր տուգանքի, որի չափը որոշում էր 9-ի խորհուրդը։ Ըստ որում տուգանքը գնում էր հոգուտ արքունի գանձարանի (նույն տեղում, հոդ. 17)։ Դատավորներից ոչ մեկը իրավունք չուներ դատարանում որևիցե մեկին ուսուցանելու, ցուցումներ տալու կամ ծածկաբար արգայի օրինակ տալու, որպեսզի ըստ այնմ նա գրի և հանձնի դատարանին։ Այս կանոնը խախտող դատավորը հոգուտ արքունի գանձարանի տուգանվում էր 100 ռուբլի և զրկվում այն գործը քննելու իրավունքից, որի վերաբերյալ ցուցումներ է տվել (նույն տեղում, հոդ. 28)։ Խիստ պատիժ է սահմանված կաշառառության համար։ Դատաստանագրքում ասված է, որ եթե պարզվեց, որ դատավորը կաշառք է վերցրել, ապա նա պարտավոր է որքան վերցրել է այնքան վերադարձնել նրան, ումից ստացել է և նույն չափով էլ, որպես տուգանք, մուծել արքունի գանձարանը։ Բացի դրանից, նա ցմահ զրկվում է դատավոր դառնալու իրավունքից (նույն տեղում, հոդ. 29)։ Դատավորը իրավունք չուներ դատավարությանը վերաբերող գրություններն ընդհանրապես և դատավճիռը՝ մասնավորապես, նախքան նրա լրիվ ավարտումն ու ստորագրումը, ցույց տալու հայցվորին կամ պատասխանողին։ Եթե դատավորը խախտեր այս կանոնը և ցույց տար վկայի ցուցմունքը կամ այս կարգի այլ գրություններ, նա զրկվում էր տվյալ գործը դատելու իրավունքից (մասն 2, գլ. 2, հ. 31), իսկ եթե ցույց տար դատավճիռը նախքան նրա վերջնական լուծում ստանալն ու «աւուրց» գրքում գրանցելը՝ ենթարկվում էր հրապարակային ծեծի և ցմահ բանտարկության (մասն 2, գլ. 10, հոդ. 3)։ Եթե ամբաստանյալ ոք երբևէ կռվել է դատավորի հետ և գտնում է, որ դատավորը ոխ ունի իր դեմ, իրավունք ունի պահանջելու, որպեսզի տվյալ դատավորը չմասնակցի իր գործի քննությանը (մասն 2, գլ. 2, հոդ. 2)։ Բացի դրանից, եթե ամբաստանյալի գործը կապված է դատավորի ազգականի հետ, նման դեպքում նույնպես, առանց ամբաստանյալի համաձայնության դատավորը իրավունք չուներ՝ «մտանել ի դատաւորութիւն ազգականին իւրոյ» (մասն 2, գլ. 2, հ. 22)։ Սակայն այս ամենը պետք է տեղի ունենար դատական պրոցեսից առաջ, նախքան գործի քննության սկսելը, որից հետո, որքան էլ պատճառը օրինավոր լիներ, բողոքարկողը զրկվում էր այդ իրավունքից (բացարկի իրավունք) և կարող էր բողոքել միայն դատավճռի դեմ, եթե գտնում էր, որ այն սխալ է կայացված (մասն 2, գլ. 2, հ. 24)։ Համաձայն դատաստանագրքի, դատավորը իրավունք չուներ որպես դատավոր մասնակցելու նաև այն գործի քննությանը, որը անձամբ վերաբերում էր իրեն, որովհետև նա չէր կարող հանդես գալ որպես և՛ դատավոր, և՛ դատախնդիր կամ պատասխանող, այլ պարտավոր էր իր հակառակորդի հետ հավասար տեղ գրավել դատարանում որպես հասարակ անձնավորության, հակառակ դեպքում կայացված վճիռը համարվում էր անօրինական և որպես տուգանք տվյալ դատավորը արքունի գանձարանն էր մուծելու 50 ռուբլի (մասն 2, գլ. 2, հոդ. 26)։ Եթե նույն գործի վերաբերյալ դա-

տավորները արտահայտում էին տարբեր կարծիքներ, նման դեպքերում նրանք պարտավոր էին հրավիրել 9 հոգուց բաղկացած խորհրդի անդամներին, իրենց կարծիքը գրավոր ներկայացնել նրանց և թողնել, որպեսզի նրանք կայացնեն վճիռը (մասն 2, գլ. 2, հոդ. 32)։

Ինչպես նշեցինք վերևում, Հայկական դատարանը քննում էր իր իշխանության ներքո գտնվող հայերի մեջ ծագած բոլոր տեսակի վեճերը, դատում զանցառուներին և հանցագործներին, լուծում տնտեսական, ընտանեկան և այդ կարգի այլ հարցեր։ Ըստ դատաստանագրքի պարտատերերի և պարտապանների միջև ծագած վեճերը պետք է լուծվեին միայն դատարանի միջոցով, դատավորների կողմից գործի քննությամբ։ Առանց դատարանի թույլտվության և դատավորների հրամանի պարտատերը իրավունք չուներ «անձամբ... իշխել ի վերա պարտականին, բռնութեամբ տիրելով զինչս նորին» (մասն 1, գլ. 3, հոդ. 26)։ Դատաստանագիրքը միաժամանակ պարտավորեցնում է դատավորներին պարտատիրոջ պահանջով բանտարկել պարտապանին, նույնիսկ շղթայակապ անել։ Դատաստանագրքում ասված է, որ եթե պարտատերը անարգվի պարտապանի կողմից և «այրեցեալ սրտով իբր առ ի վրէժխնդրութիւն խընդրիցէ դատաւորէն զի շղթայակապ արասցէ զպարտականն, պարտին դատաւորք զխնդիր պարտատիրին լրացուցանել և շղթայիւք կապել զպարտականն» (մասն 1, գլ. 3, հոդ. 21)։ Դատավորները իրավունք ունեին հիվանդության, տոն օրերին կամ կարևոր գործի համար բանտարկյալին ժամանակավորապես ազատել միայն երաշխավորագրով կամ դատարանի սպասավորներից մեկի հսկողությամբ (մասն 1, գլ. 3, հոդ. 22, 23)։ Համաձայն դատաստանագրքի՝ դատավորները իրավունք ունեին իրենց ապահովության համար շղթայակապել բանտարկյալին, երբ գտնում են, որ նա մտադրություն ունի փախչելու կամ փախուստից են հետ բերել (մասն 1, գլ. 3, հոդ. 25)։

Ժամկետանց սանդի, բարաթի և այս կարգի տնտեսական մյուս գրությունների շուրջը ծագած վեճերը նույնպես լուծում էին դատավորները (մասն 1, գլ. 4, հոդ. 20, գլ. 15, հոդ. 32։ Տե՛ս նաև մասն 1, գլ. 3, հոդ., հոդ. 20. 24, 25, 29, 30, գլ. 7, հ. 11, 18)։ Առանց դատավորների թույլտվության, նույնիսկ պայմանագրության առկայության դեպքում, ոչ ոք իրավունք չուներ յուրացնելու գրավը։ Նման դեպքերում գրավառուն «պարտ է յայտնել դատաւորաց, հրամանաւ նոցին առնել զլրացուցումն դաշնագրութեան» (մասն 1, գլ. 5, հոդ. 3, 14, 18)։ Համաձայն դատաստանագրքի դատավորները պետք է հրսկեին և առևտրի գործին, հետևեին, որպեսզի ոչ ոք առանց իրենց թույլտվության չվաճառեր արգելված ապրանքներ։ Դատաստանագրքում ասված է. «Ոչ ոք իշխեսցէ առանց հրամանագրի դատաւորաց վաճառել զզառիկ, զսնդիկ, զսալամանդր, զցիքութայ, զմեռինայ, զմանրագոր, զթունաւոր ճանճ և այլ սոյն պիսիք։ Ուստի հարկաւորին դատաւորք պնդապէս վերահասու լինել և կարգել զիմաստուն և հանճարեղ այր վաճառող սոցին, իսկ եթէ ոք առանց հրամանագրի դատաւորաց վաճառեսցէ զվերոյ գրեցեալսն՝ խստապէս ձաղկեսցի և տացէ տուգանս ըստ չափու մեղացս» (մասն 1, գլ. 12, հոդ. 83)։ Դատավորները պետք է հայտնաբերեին չափը կամ կշիռը կեղծողներին և դատարանի հրամանով հավիտյան զրկեին առևտուր անելու իրավունքից ու ենթարկեին տուգանքի՝ հասցրած վնասի կրկնակի չափով (մասն 1, գլ. 12, հոդ. 87)։ Ըստ դատաստանագրքի այնտեղ որտեղ ճարտարապետ չկա, դատավորները պետք է հսկեին շինարարական աշխատանքներին, յուրաքանչյուր կարիքավորին տա-

յին «ըստ հարկաւորութեան և ըստ կացութեան աստիճանի... գետին վասն շինելոյ զտուն բնակութեան նոցա» (մասն 1, գլ. 22, հոդ. 1, 2, 25)։ Եթե ավանդատուն մահանում էր առանց կտակի, ավանդատուն պարտավոր էր միայն դատավորների գիտությամբ ու թույլտվությամբ ավանդը հանձնել օրինավոր ժառանգորդին և նրանից վերցներ ստացագիր՝ «կվիտանցի կամ ըռէսիդ» (մասն 1, գլ. 14, հոդ. 126, 127, 128)։

Դատավորները պետք է հսկեին նաև այնպիսի անձնավորությունների գործունեության վրա, որոնք հոգեկան խանգարում ունենալով՝ իրենց գույքը խիստ ցածր գներով վաճառում ու վատնում են, առաջ բերելով ազգականների դժգոհությունը (մասն 1, գլ. 13, հոդ. 32)։ Դատաստանագիրքը առևտրական գործառության մեջ անհրաժեշտ է համարում միջնորդի մասնակցությունը։ Սակայն, ըստ դատաստանագրքի, առանց դատավորների տված խրատական օրդերի, ոչ ոք չէր կարող լինել միջնորդ, իսկ նա, ով առանց նման օրդերի հանդես կգար միջնորդի դերում «պարտաւորի տալ տուգանս և կրել զպատիժ վասն յանդգնութեան իւրոյ» (մասն 1, գլ. 14, հոդ. 175 և 176)։ Դատաստանագիրքը խստիվ արգելում է ինքնադատաստանը, եթե անգամ հանցագործը ծառա է և արժանի սպանության։ Դատաստանագրքում ասված է, որ «Ոչ ոք կարէ անձամբ անձին վրեժխնդիր լինել ծառայից իւրոց ի գործս մարդասպանութեան և սպանանել զնոսա, այլ պարտի մատուցանել առ դատաւորն, իսկ եթէ ոք անհնազանդ հրամանի դտեալ սպանանիցէ զծառայ իւր՝ ինքն ևս մահապարտ է, մահու մեռցի» (մասն 1, գլ. 10, հոդ. 44)։ Մի այլ առիթով, դարձյալ խոսելով ինքնադատաստանի անթույլատրելիության մասին, դատաստանագրքի հեղինակները գրում են. «զի եթէ ամենայն ոք անձամբ անձին կարէր առնել զդատաստան՝ ի զուր լինէր կարգեցեալ դատաստան և դատաւորքն» (մասն 1, գլ. 11, հ. 51)։

Համաձայն դատաստանագրքի հոգաբարձուներին նույնպես նշանակում, կամ եթե կտակագրով է կարգված, հաստատում էին դատավորները (մասն 1, գլ. 9, հ. 1)։ Դատավորները պարտավոր էին ոչ միայն նշանակել կամ հաստատել հոգաբարձուներին, այլ հսկել նրանց գործունեությանը և եթե նրանք չեն արդարացնում իրենց կամ թույլ են տալիս անկարգություն (վատնում, անբարոյականություն և այլն), պետք է զրկեին այդ իրավունքից և նշանակեին մեկ ուրիշի (մասն 1, գլ. 9, հոդ. հոդ. 8, 9, 10, 11, 14, 17, 23)։ Առանց դատավորների թույլտվության և նրանց հետ խորհրդակցելու, հոգաբարձուները իրավունք չունեին վաճառելու որբերի անշարժ (տուն, այգի) և որոշ տեսակի շարժական (ոսկի, արծաթ, մարգարիտ) գույք (մասն 1, գլ. 9, հ. 16)։ Հոգաբարձուները հաշվետու էին դատավորների առաջ։ Նրանք պարտավոր էին տարեվերջին հաշիվ տալ դատավորներին, որպեսզի վերջիններս տեղյակ լինեին նրանց գործունեության մասին (մասն 1, գլ. 9, հոդ. 7)։ Հոգաբարձուի վարձը նույնպես որոշում էին դատավորները, որի համար էլ դատաստանագիրքը պարտավորեցնում է դատավորներին «ուղղապէս քննել զյանձնելի գործոց չափն և կարգել արժանաւոր վարձս, ոչ շռայլաբար և ոչ ժլատօրէն» (մասն 1, գլ. 9, հոդ. 26)։

Հոգեորդու ընդունումը նույնպես տեղի էր ունենում դատավորների անմիջական մասնակցությամբ (մասն 1, գլ. 17, հ. 1)։

Ծնողների բաժանումը որդիներից, ինչպես նաև եղբայրների բաժանումը միմյանցից ևս տեղի էր ունենում դատարանի միջոցով, դատավորների կողմից

գործի քննությամբ և վճռի կայացմամբ, առանց որի ըստ դատաստանագրքի «բաժանումն է անհաստատ» (մասն 1, գլ. 18, հոդ. 2)։ Բացի դրանից, եթե բաժանված որդին չի օգնում, հարգում ու պատվում իր ծնողին, ապա «պարտաւորին դատաւորք վրեժխնդիր լինիլ և սաստել այնպիսի որդոյն... պատժել և ի բանտի արգելել, զի հատուսցէ ծնօղացն պարտականութիւն իւր» (մասն 1, գլ. 18, հ. 8)։ Համաձայն դատաստանագրքի, եթե եղբայրների բաժանումը տեղի էր ունենում առանց բաժանագրի, վկայի և դատավորների գիտության, համարվում էր «անհաստատ» (մասն 1, գլ. 19, հոդ. 5 և 8)։

Ամուսնալուծությունը նույնպես տեղի էր ունենում դատավորների և տեղի եպիսկոպոսի գիտությամբ ու վճռով։ Դատաստանագրքում ուղղակի ասված է, որ «բաժանումն ի մէջ ամուսնացելոց պարտ է լինիլ վերահասութեամբ դատաւորաց և եպիսկոպոսի տեղոյն» (մասն 1, գլ. 21, հոդ. 7)։

Դատաստանագիրքը պարտավորեցնում է դատավորներին ամեն մի գործ քննելիս և դատավճիռ կայացնելիս ելնել կոնկրետ իրադրությունից։ Դատաստանագրքի առաջին մասի 12-րդ գլխի վերջին հոդվածում ասված է. «Ի ներքոյ ծանր պատուիրանի պարաւանդին դատաւորք ըստ ամենայնի առանց ակնառութեան վերահասու լինիլ ամենայն դատաստանական իրաւանց, զի թէպէտ վասնորոյ սահմանեցեալ է վասն ամենայն մեղաց արժանաւոր պատիժ, սակայն են երբեմն մեծ մեղք, որք գործին այնպիսի կերպիւ զորոց պատիժս թուլացուցանել և նուազեցուցանել արժան է և են մեղք, որք թէպէտ ի փոքրի համարման իցէ, սակայն մեղաւորքն չարութեամբ կամաց գործելով՝ արժանի լինին մեծապէս պատժեցեալ գոլոյ, վասնորոյ թողեալ է դատաւորաց ըստ վերահասութեան իւրեանց առաւելացուցանել և նուազեցուցանել զտանջանս մեղաւորաց ըստ պատահման և ըստ բերման ժամանակին»։

* * *

Դատավորներից հետո, որպես դատարանի կարևոր պաշտոնյա, դատաստանագիրքը հիշատակում է ատենադպրին։ Վերջինս դատարանի գլխավոր գրագիրն էր «որ կարդեցեալ լինի ի ատեան դատաստանի» (մասն 2, գլ. 5, հոդ. 1)։ Նա պարտավոր էր ատյանում դատավորների առաջ կարդալ հրովարտակներ, հուշագրեր, արգաներ, մի խոսքով ամեն տեսակ գրություններ։ Նա պարտավոր էր հետևել բոլոր այն գրություններին, որոնք դուրս էին գալիս դատարանից, որպեսզի նրանք գրված լինեն ըստ «օրինաց և կարգաց»։ Դատարանի մյուս գրագիրները (օրինակող, թարգմանիչ) գտնվում էին նրա հրամանի ներքո և ենթարկվում էին նրան։ Նա պետք է հետևեր, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը ժամանակին և ճշտությամբ կատարեր իր պարտականությունները։ Իսկ ինքը՝ ատենադպիրը՝ ենթարկվում էր դատավորներին (մասն 2, գլ. 5, հոդ. 2, 3)։ Ատենադպիրը պարտավոր էր պահել 3 գիրք։ Առաջինը կոչվում էր «պրիխօդեաշչիե», այսինքն՝ մուտքի մատյան, որտեղ գրանցվում էին բոլոր հրովարտակները, հուշագրերը, արգաները և այս կարգի մյուս գրությունները ըստ համարի և ամսվա օրերի։ Երկրորդը կոչվում էր «օտխօդեաշչիե», այսինքն՝ ելքի մատյան, որտեղ գրանցվում էին վերոհիշյալ և այդ կարգի մյուս բոլոր այն գրությունները, որոնք ելնում էին դատարանից։ Երրորդը կոչվում էր «Մուրնալ կամ գիրք աւուրց», որտեղ ատենադպիրը ըստ ամիսների և օրերի «համառոտապէս գրեսցէ ամենայն կարգաւորութիւնք դատաստանի» և այն ամենը, ինչ կհրամայեն գրել դատավորները։ Հիշյալ գրքերը կազմվում էին ըստ

տարիների (մասն 2, գլ. 5, հ. 4)։ Ատենադպիրը պարտավոր էր իր իրավասության տակ գտնվող գրությունները պահել ծածուկ, իր տրամադրության ներքո եղած փակ արկղի մեջ (նույն տեղում, հ. 5), իսկ լուծում ստացած գրությունները ժողովել առանձին-առանձին՝ ըստ տարիների, և դնել դատարանի դրքատանը (նույն տեղում, հ. 6, մասն 2, գլ. 13, հ. 1)։ Ատենադպիրը պարտավոր էր գիտակ լինել «կանոնաց և օրինաց», որպեսզի դատավորների հարցերին պատասխաններ (մասն 2, գլ. 5, հ. 7)։ Իր պարտականությունները կանոնավոր չկատարելու դեպքում նա ենթարկվում էր պատասխանատվության (նույն տեղում, հ. 3)։

Դատարանի աշխատակիցներից էին նաև օրինակողն ու թարգմանիչը։ Առաջինը դատարանի դրագիրն էր, ենթարկվում էր դատավորներին ու ատենադպրին և պարտավոր էին գրել այն ամենը, ինչ կհանձնարարեր վերջինը։ Օրինակողը պետք է գրեր պարզ ու հասկանալի լեզվով (մասն 2, գլ. 6, հ. 1—3)։ Թարգմանչի պարտականությունն էր անհրաժեշտ գրությունները ուրիշ լեզուներից թարգմանել հայերեն և ընդհակառակը։ Նա պետք է թարգմանությունը կատարեր ոչ թե բառ առ բառ, այլ այնպես, որ նա ունենար նույն իմաստը, ինչ բնագիրը։ Եթե թարգմանելի գրությունը վերաբերում էր դատարանին կամ դատավորներն ու ատենադպիրն են տվել նրան թարգմանության համար, ապա նա իրավունք չուներ այդ գրությունները դատարանից դուրս տանելու, իսկ եթե թարգմանությունը կատարում էր հասարակ ժողովրդի համար ազատ էր, որտեղ ցանկանար այնտեղ կթարգմաներ (մասն 2, գլ. 7, հ. 1—3)։

Դատաստանագրքի առանձին հոդվածներից, ինչպես նաև արխիվային բազմաթիվ փաստաթղթերից երևում են, որ Հայկական իրավարաններն իրենցից ներկայացնում էին ոչ միայն գաղութաբնակ հայերի «դատաստանատունն» ու ոստիկանատունը, այլ նրանց ձեռքին էր գտնվում նաև բնակչության վրա հարկերը բաշխելու և ժողովելու գործը։ Իրավարանի (ռատհաուզի) պաշտոնյաներից ստարոստան էր զբաղվում այդ գործով։ Նա ընտրվում էր ժողովրդի կողմից և իրավարանի հրամանով ստանձնում էր նրանցից գանձվող հարկերն ու հասույթները հավաքողի և դատարանի ծախքերի տնորինողի պաշտոնը (մասն 2, գլ. 11, հ. 1)։ Ստարոստան պարտավոր էր դատավորների հսկողությամբ կանոնավոր կերպով ժողովրդից հավաքել հարկը և ումից ստանում էր նրան տալ գրություն՝ «ղավզ», որտեղ գրված պետք է լիներ, որ այսինչից ստացել է այսքան դրամ և գրանցել օրացույցում, հերթական համարի տակ (մասն 2, գլ. 11, հ. 12)։ Ստարոստան էր հավաքում նաև տուգանքը։ Դատավորները տուգանքին վերաբերող հրամանագիրը հանձնում էին ստարոստային, վերջինս գանձում էր տուգանքը և տալիս համապատասխան ստացական (նույն տեղում, հ. 3)։ Ստարոստան պարտավոր էր պահել երկու գիրք, որոնցից մեկը կոչվում էր «օրացույց» կամ «գիրք աւուրց», իսկ «աշխարհօրէն բուզնամայ», իսկ մյուսը՝ «Գիրք յատկական հաշուոյ»։ Առաջին գրքում նա պարտավոր էր գրանցել դատարանի ամեն տեսակի ելքն ու մուտքը, ստացած հարկերը, տուգանքները և բոլոր տեսակի ծախսերը։ Երկրորդ գրքում, որն «աշխարհօրէն» կոչվում էր «քաթայ», ստարոստան գրանցում էր յուրաքանչյուր հաշիվ առանձին՝ հարկերը առանձին, տուգանքը առանձին, դատարանի ծախսերը առանձին, ուրիշ կարգի ծախսերը առանձին։ Ինչպես օրացույցում, այնպես հատկական հաշվողրքում, ստարոստան պետք է գրանցեր ստացված և ծախսված գումարը և միաժամանակ նշեր, որ այդ գրանցված է նաև օրացույ-

ցում այս ինչ համարի տակ. և ընդհակառակը, «օրացույցում» պետք է նշեր, որ հատկական հաշվոգրքում տվյալ հաշիվը գրանցված է այնինչ համարի տակ (նույն տեղում, հ. 4)։ Եվ այդպես, այն ինչ գրանցվում էր «օրացույցում», պետք է գրանցվեր և լիովին համապատասխաներ «հատկական հաշվոգրքում» գրանցվածին և ընդհակառակը։ Ստարոստան պատասխանատու էր դատարանի և այլ նպատակներով կատարվող ծախսերի, ինչպես նաև տարեկան հարկը ժամանակին Գլխավոր Դատարանին հանձնելու համար։ Այդ ամենը նա պետք է կատարեր միմիայն դատավորների գրավոր հրամանի համաձայն։ Առանց գրավոր հրամանի կատարված ծախսերը, եթե անգամ դրանք անհրաժեշտ էին ու օրինավոր և կատարվել էին դատավորների բանավոր հրամանի հիման վրա, համարվում էին ապօրինի և ստարոստան ոչ միայն կրում էր վնասը, այլ նույն չափով էլ տուգանք էր մուծում արքունի գանձարանը (նույն տեղում, հ. 6, 8)։

Ինչպես դատաստանագրքի ուրիշ շատ պահանջները, այնպես էլ այս պահանջը լիովին իրագործվել է կյանքում։ Այդ մասին են վկայում Աստրախանի Հայկական դատարանի (Ռատհաուզի, իրավարանի) բազմաթիվ արձանագրություններն ու որոշումները։ Ռատհաուզի 1763 թ. մայիսի 2-ի արձանագրություններից մեկում, որը վերաբերում է հին ստարոստա Ավագին պաշտոնից ազատելու և Պետրոսին նոր ստարոստա նշանակելու խնդրին, կան ուշագրավ այսպիսի տողեր ստարոստայի գործելակերպի մասին. «անձամբ անձին ոչինչ խարճն չառի երկիւղ կրելով, որ անձամբ անձին խարճն արարածն իրան քիսակէն կու լինի խարճած. և վասն բարուք կառավարութեան նոյն դի Պետրոսն երկու դաֆտար պահի, մնումն ինչ ամադ և բոաֆտ լինի կարգաւ դրի՝ անուանելով օրացոյց, միուսումն՝ նախ՝ կուպեռցկի կանցալարին, երկրորդ՝ օկլատին, երրորդ՝ կազարմին, չորրորդ՝ բոսխոդին, յինկերորդ՝ բշտրաֆի հատուկ հատուկ քաթայ գրոտի և ամենայնիվ արի և հավատարիմ լինիլ ի գործս իւր»[12]։

Ընդհանրապես Աստրախանի հայկական գաղութին վերաբերող արխիվային փաստաթղթերը և, առանձնապես, Հայկական դատարանի նյութերը ոչ միայն վառ կերպով վկայում են, որ հայ դատավորները ղեկավարվել ու առաջնորդվել են սույն դատաստանագրքով, այլ նաև լրացնում ու հաստատում են դատաստանագրքում առաջադրված շատ հարցեր, ցույց տալիս, թե կյանքում ինչպես է կիրառվել դատաստանագիրքը։

Առանց պահանջվող դրամը ստանալու ստարոստան իրավունք չուներ որևիցե մեկին ղավզ տալու, իսկ եթե տրվել է, ղավզ ստացողը իրավունք ուներ այլևս չվճարել դրամը, թեկուզ և բազմաթիվ վկաներ հաստատեին, ստարոստան չի ստացել այդ դրամը (նույն տեղում, հ. 9)։ Վնասը ստարոստայի վրա էր ընկնում նաև դրամը կորցնելու, ինչպես նաև պակասորդ լինելու դեպքում (նույն տեղում, հ. 10)։ Եթե դատավորները ելնելով օրինավոր պատճառներից որոշում են որևիցե մեկին հասանելիք դրամը կամ իրը պահել դատարանում, պարտավոր էին հրամանագրով հանձնել ստարոստային և ետ ստանալու ժամանակ նույնպես ստանալ հրամանագրով (նույն տեղում, հ. 7)։ Ստարոստան պարտավոր էր ժողովրդից հարկը հավաքել ամենայն հետևողականությամբ, ստիպել, որպեսզի յուրաքանչյուրը ժամանակին վճարի իր հարկը։ Հակառակ դեպքում դատաստանագիրքը պահանջում է չվճարված հարկերը գանձել իրե-

[12] ГААО, ф. АСС, № 415, оп. 2, д. 7, л. 3.

նից՝ ստարոստայից, որը թերացել է բարեխղճորեն կատարելու իր պարտականությունները (նույն տեղում, հ. 11)։

Հասկանալի է, որ նման պայմաններում ստարոստան ջանք չէր խնայի ժամանակին ժողովրդից հավաքելու բոլոր այն հարկերը, ինչ պարտավոր էին վճարել նրանք։ Բացի դրանից ստարոստային իրավունք էր տրվում իրենց հարկը սիրով և ժամանակին չվճարողներին բանտարկել և պահել այնքան ժամանակ, մինչև կվճարի հարկը (նույն տեղում, հ. 12)։ Համաձայն դատաստանագրքի, եթե վերոհիշյալ ապօրինի համարվող ձևերով ծախսված (հ. 6, 8), անփութության հետևանքով կորցրած կամ իր գործում թերանալու հետևանքով չհավաքած դրամը (հ. 9, 10, 11) ստարոստան ի վիճակի չէ վճարելու, վճարում էին նրան ընտրողները և հետագայում պահանջում նրանից (նույն տեղում, հ. 13)։ Ստարոստային իրավունք էր տրվում ունենալու մեկ կամ երկու գրագիր, որոնք գրում էին նրա հանձնարարած գրությունները, ժողովրդին տրվող ստացագրերը։ Այդ գրագիրները իրենց վարձը ստանում էին իրավարանից (նույն տեղում, հ. 5)։

Իրավարանի պաշտոնյաներից էին նաև ատենապանն ու բանտապետը։ Առաջինի պարտականությունն էր ատյանի պաշտպանությունը։ Առանց դատավորների և ատենադպրի թույլտվության նա ոչ ոքի չպետք է ներս թողներ ատյան (մասն 2, գլ. 12, հ. 1—2)։ Ատենապանը պետք է զգույշ լիներ, որպեսզի ատենադպրից և օրինակողից բացի ոչ ոք ատյանից գրություն դուրս չտանի։ Իր պարտականությունները կանոնավոր չկատարելու դեպքում, առանձնապես երբ ատյանից գրություն գողացվեր՝ նա ենթարկվում էր հրապարակային ծեծի և ցմահ բանտարկության (մասն 2, գլ. 12, հ. 3)։ Դատաստանագրքի երկրորդ մասի 14-րդ գլխում մանրամասն շարադրված են նաև բանտապետի պարտականությունները։

Մինչև հիմա մենք խոսեցինք Հայկական իրավարանի հիմնական աշխատողների մասին, որոնք թվով մոտ 10 հոգի էին և ներկայացնում էին դատարանի մշտական կազմը։ Սակայն բացի դրանցից կային նաև երկրորդական կարգի այլ պաշտոնյաներ, որոնք սպասարկում էին դատարանին, կատարում դատավորների, ատենադպրի և ստարոստայի հրամանները։ Դրանք ներկայիս իմաստով դատարանի ցրիչներն էին, որոնք դատարանից դուրս եկող գրությունները հասցնում էին այնտեղ, որտեղ անհրաժեշտ էր, դատարան էին կանչում նրան, ում անհրաժեշտ էր, ստարոստայի հրամանով ժողովրդից վերցնում էին հարկը և հանձնում նրան (մասն 2, գլ. 15, հ. 1)։ Համաձայն դատաստանագրքի, եթե վերոհիշյալ աշխատողներից մեկն ու մեկը դատավորների հրամանով դատարան էր կանչում դատախնդրին, վերջինս որպես վարձ պարտավոր էր նրան վճարել 6 կոպեկ (մասն 2, գլ. 15, հ. 2)։ Իրենց պարտականությունները չկատարելու դեպքում նրանք ենթարկվում էին հրապարակային ծեծի (մասն 2, գլ. 15, հ. 3)։

Դատաստանագրքում թվարկված են ոչ միայն Հայկական իրավարանի պաշտոնյաներն ու մանրամասն շարադրված նրանց իրավունքներն ու պարտականությունները, այլև նշված է դատարանում նրանց գրավելիք տեղերը։ Ըստ դատաստանագրքի ատյանում նստում էին միայն դատավորներն ու ատենադպիրը։ Ատյանում դրված սեղանի բարձրագիր տեղում նստում էր առաջին կամ գլխավոր դատավորը, նրա աջ կողմում երկրորդ և ձախում երրորդ դատավորը։ Դատավորներից դեպի աջ, առանձին նստում էր ատենադպիրը, իր

հետ ունենալով դատավորների առաջ կարդացվելիք բոլոր անհրաժեշտ գրություններ «և մանավանդ զգիրքս դատաստանական» (մասն 2, գլ. 4, հ. 1—2)։ Այսանից դուրս, առանձին սեղաններ ունեին թարգմանիչը, օրինակողը, ստարոստան և իր գրագիրը, այնտեղ էին կատարում նրանք իրենց պարտականությունները։

* * *

Դատաստանագրքի ոչ մի հոդվածում որոշակի տվյալ չկա դատավորների վարձատրության մասին. վարձատրվում էիս նրանք թե ոչ, եթե այո՝ ումից և ինչքան, եթե ոչ, ապա ինչ միջոցներով էին ապրում։ Անուղղակի որոշ ակնարկներ հնարավորություն են տալիս մեզ պարզելու այդ հարցերը։ Այսպես, դատաստանագրքի 2-րդ մասի 2-րդ գլխի 34-րդ հոդվածում, որը վերաբերում է ժողովրդի վրա հարկերի ճիշտ բաշխման հարցում դատավորների դերին, ասված է. «Վասն թագաւորական հարկաց և այլ ամենայն կերպ հասարակական՝ հարկաւորութեանց, որպիսի է վասն վարձուց դատաստանական սպասաւորացն, և այլ պատշաճաւոր ծախից, որ պարտ իցէ՝ ժողովէ զդրամս ի ժողովրդենէ. դատաւորք, ընդ ինն վերահասու լինող արանցն համաձայն, առանց աչառութեան ուղղապէս կարգաւորութեամբ դիցեն հարկս ի վերա իւրաքանչիւրոց։ Այսպէս և դատաւորք ընդ ինն վերահասու լինող արանցն պարտին վերահասու լինիլ ամ յամէ հաշուոյ ըստաստին որ ժողովէ գրամս ի ժողովրդեանց» (ընդգծումը մերն է—Ֆ. Պ.)։ Այստեղից պարզ երևում է, որ բացի թագավորական հարկից ժողովրդից հավաքվել են նաև ուրիշ հարկեր հոգուտ «հասարակական հարկաւորութեանց» և առաջին հերթին «վասն դատաստանական սպասաւորացն»։

Դատաստանագրքի նույն մասի 11-րդ գլխի 8-րդ հոդվածում նույնպես խոսվում է այդ մասիս։ Այնտեղ ասված է, որ ստարոստան առանց դատավորների գրավոր հրամանի իրավունք չունի դրամ ծախսելու, նույնիսկ այնպիսի օրինավոր նպատակներով, ինչպիսին դատարանի պաշտոնյաների վարձը վճարելն է։ Ահա այդ հոդվածը. «Եթէ ըստաստային առանց հրամանագրի դատավորաց անձամբ անձին կամ լեզուաւ հրամանի դատավորաց մսխեսցէ դրամ ինչ վասն օրինաւոր հարկաւորութեան կամ տացէ դատաստանական պաշտօնէիցն զվարձս կամ այլ սոյնպիսիս՝ եղիցի ամենայնիւ անհաստատ...» (ընդգծումը մերն է—Ֆ. Պ.)։ Նույն գլխի մի այլ հոդվածում, որտեղ խոսվում է ստարոստային օգնող գրագիրների մասին, ասվում է. «Պարտ է ըստաստին ունիլ մի կամ երկու գրագիր, որ գրեսցէ զվերոյ գրեցեալ գրեանսն և զժողովրդեան տալոյ զդրամսն և նոյն գրագրին տացի վարձս ի դատաստանարանէ, և ոչ է պարաւանդեալ ըստաստին տալ վարձս գրագրին»։ Բացի դրանից դատաստանագրքի երկրորդ մասի 9-րդ գլխի առաջին հոդվածում ասված է, որ դատավորները պարտավոր են ներկայանալ դատարան և զբաղվել իրենց աշխատանքով շաբաթվա բոլոր օրերին, բացի կիրակի, իսկ տարվա ընթացքում նաև տոն օրերից։ Ասված է, որ «Եթէ գլխաւոր և մեծ հարկաւորութիւն ինչ պատահեսցի, որպիսի գլխաւոր և մեծ տօնախմբութիւն և իցէ... պարտ է դատաւորաց և այլ դատաստանական պաշտօնէից ժողովիլ և հոգալ զհարկաւորութիւն այն, զի մի ծնանիցի վնաս ի յամեցուցանելոց»։ Հասկանալի է, որ տարվա բոլոր աշխատանքային օրերին և նույնիսկ առանձին դեպքերում տոն օրերին դատարանում գտնվող աշխատակիցները պետք է որ իրենց վարձատրությունն էլ

ստանային դատարանից, որպես տվյալ հիմնարկի մշտական աշխատակիցներ, այլապես ինչպե՞ս պետք է ապրեին։ Դատաստանագրքի մեկ այլ հոդվածում ասված է, որ անհարգելի պատճառով երկար ժամանակ բացակայելու և իր պարտականությունները չկատարելու դեպքում դատավորը հոգուտ արքունի գանձարանի ենթարկվում էր տուգանքի, որի չափը որոշում էին 9-ի խորհրդի անդամները (մասն 2, գլ. 2, հոդ. 17)։ Ուստի տրամաբանականն այն է, որ դժվար թե ձրի, հասարակական կարգով աշխատող դատավորին նման խիստ պահանջներ առաջադրվեր։ Ինչպես ուրիշ, այնպես էլ այս հարցի լրիվ պարզաբանմանն օգնության են գալիս արխիվային փաստաթղթերը։ Աստրախանի Հայկական իրավարանի նյութերը նույնպես վկայում են, որ դատարանի աշխատակիցները ստանալիս են եղել վարձ։ Իրավարանի 1765 թ. ելքի մատյանում կարդում ենք. «Օրդեր առ Աստրախանայ մեշչանին Պետրոս դի Վարդանին... հրաման է քեզ, որ... յանգուցեալ Պեժան դի Մարգարի քեզ մոտ ելած կայուցն, առանց ամենայն պատճառի 100 ռուբլի պահէս կամ թէ ուղարկես իրավարան վասն իրավարանիս պաշտօնէյից վարձ կամ այլ հարկավոր և պիտանի խարջից օգնութեան համար։ Եթէ բանիս թոյլութիւն առելով անունկնդիր լինէս և յիշեալ 100 ռուբլին նորայ կայուցն չի պահէս՝ իրավարանն ի քեզանէ պահանջելոց է առանց պատճառանաց»[13]։

Մեզ թվում է, որ նշված փաստերը բավական են համոզվելու համար, որ իրոք դատարանի, որպես պաշտոնական հիմնարկության, թվով մոտ 10 մշտական աշխատակիցները վարձատրվել են ու այդ և ուրիշ այլ հասարակական ծախսերի համար ժողովրդից հավաքվել է սահմանված քանակությամբ հարկ։ Բայց որոշել, թե որքան է եղել դատարանի աշխատակիցների ամսական կամ տարեկան վարձը, մանավանդ ըստ պաշտոնների, առայժմ դժվար է։

Դատաստանագրքի հեղինակները իրենց օգտագործած գրավոր աղբյուրներից հիշատակում են Հուստինիանոսի դատաստանագիրքը։ Սակայն Հուստինիանոսի դատաստանագրքից նրանք, ինչպես իրենք են ասում, բաց են թողնում «բազում բանս, որք ոչ պատկանին առ կացութիւն մեր»[14] և օգտվել են հայկական սովորութական իրավունքից։ Եվ իրոք, դատաստանագիրքը, որ բաղկացած է 1135 հոդվածներից, իր հիմնական մասով առնչություն չունի Հուստինիանոսի դատաստանագրքի հետ, ինչպիսիք են օրինակ առևտրին, վաճառականությանը, ամուսնությանը, ամուսնալուծությանը, Հայկական դատարանին, կրոնական հարցերին և կյանքի այլ բնագավառներին վերաբերող հոդվածները, որոնց թիվը հաշվվում է հարյուրներով, իսկ այն մի քանի տասնյակ հոդվածները, որոնք վերցված են Հուստինիանոսի օրենքներից, դրանք էլ ոչ թե սոսկ թարգմանություններ են, այլ վերափոխված են և հարմարեցված Ռուսաստանում ապրող հայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններին։

Դատաստանագրքի հեղինակները թվարկում են նաև ռուսական կառավարության կողմից տարբեր ժամանակներում հայերին տրված արտոնությունները, խոսում հայկական իրավարան հիմնելու և հետևաբար, դատաստանագիրք ունենալու անհրաժեշտության մասին։ Սակայն, չնայած նրանք չեն խոսում ռուսական օրենքներից օգտվելու մասին, այնուամենայնիվ «Դատաստա-

---

13 ГААО, ф. ААС, № 810, оп. 3, д. 2, л. 7.

14 Մատենադարան, ձեռ, № 7383, «Առաջաբան», թուղթ Ա։

նագրքի» և ռուսական օրենքների ժողովածուների («Свод законов Российской империи», «Полное собрание законов») համեմատությունից պարզվում է, որ մեր հեղինակները քաջ ծանոթ են եղել ռուսական օրենքներին, օգտվել են նրանցից, կրել են այդ օրենքների և ընդհանրապես ռուսական միջավայրի ազդեցությունը (համեմատիր «Свод законов Российской империи», т. X, ч. II, СПБ., 1857 г., №№ 360, 361, 362, 363, 369, 371, 387, 405. «Դատաստանագիրք», մասն 3-րդ, գլ. 10, հոդ. 2, 11, 12, 17, 10 և այլնի հետ)։

Ուստի և հանգիսանալով կարևոր ներդրում միջնադարյան հայ իրավագիտության պատմության մեջ, դատաստանագիրքը միաժամանակ հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունն արտահայտող լավագույն հուշարձաններից մեկն է, որը վառ կերպով ցույց է տալիս Ռուսաստանի տիրապետության տակ եղած հայերի անհամեմատ բարվոք վիճակը Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ եղած հայերի համեմատությամբ։